

նաեւ ոմակի ներհակմանս ին եւս, եւ օր յաւուր
գօրանային ներհակքն ի վերայ Նիկոյին: Այլ եւ
Գրիգոր վարդապետն, զամենայն որպիսութիւն
անցուածոցս այսմիկ, այլ եւ զանուորայ վարս
Նիկոյին քորով ծանոյց Մովսէս կաթողիկոսին
ի սուրբ Էջմիածին, եւ խնդրեաց ի նմանե զի
եւ նա բարձր հրամանաւ սուրբ Էջմիածնի եւ
կաթողիկոսական իշխանութեանքն բանադրեացի
զՆիկոյ եպիսկոպոսն եւ Մովսէս կաթողիկոսն
եւս զրեաց զիր բանադրանաց եւ առաքեաց ի
վերայ Նիկոյ եպիսկոպոսին, եւ այսու պատ-
ճառաւ առաւել եւս զօրացան ներհակքն ի վե-
րայ Նիկոյին եւ ի մարտի ունեին զնա» (Ա. Գ. Եւ-
րէժէցի, էջ 368-370):

Կեսարացիի բանագրանաց գիրը ահա-
ւոր իրարանցում պատճառեց ի Լվով, ուր
Ժողովուրդը զԺգոհ էր արդէն իր առաջ-
նորդէն:

Գրիգոր Կեսարացի այսպէս խռովու-
թեան մէջ ձգելով Լեհաստանի հայերը կը
դառնար ետ, սակայն չէր կրնար տիրա-
նալ Կ. Պոլսոյ աթոռին, վասնզի իր բա-
ցակայութեան միջոցին դարձեալ հակա-
ռակորդները զօրացած էին և Զաքարիա
Վանեցի տիրացած էր 1629ին(*) Կ. Պոլսոյ

(*) Ըստ Օրմանեանի (Ազգապատմ, էջ 2395)-
1628ին: